

Դավիթ Ս. Գյուրջինյան  
Բանասիր. գիյր. թեկնածու

«ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ ԱՊՐՈՂ ՀԱՅ»  
ՆՇԱՆԱԿՈՂ ԲԱՌԵՐԸ

Իմաստակառուցվածքային և բառարանագրական քննություն\*

**Բանալի բառեր** – «արտերկրի հայ» իմաստային խումբ, «երկրանուն+հայ» բառակազմական կաղապար, պարսկահայ, իրանահայ, հայ բառարանագրություն:

Մուտք

Դարեհ Առաջինի օրոք (մ. թ. ա. 522–486) սկսվեցին հայերի և պարսիկների միջև սերտ հարաբերությունները, որից հետո Հայաստանը և Պարսկաստանը քաղաքականապես և քաղաքակրթորեն մեկ ամբողջություն էին<sup>1</sup>:

Սակայն, երբ 226-ին Իրանում Արշակունիներն ընկան՝ երկիրը հանձնելով Մասանյաններին, դրացի ժողովուրդների բարեկամական հարաբերություններին փոխարինելու եկավ մի քանի դար տևած թշնամությունը, որը հետագայում կրկին վերածվեց ջերմ բարեկամության: Այդ շրջանում հաճախակի են եղել Հայաստանից Իրան բռնագաղթերը: Առաջին խոշոր բռնագաղթն իրականացվեց 4-րդ դարի 60-ականներին: Շապուհ Երկրորդը ներխուժեց Հայաստան, ավերեց Արտաշատը, Վաղարշապատը, Երվանդաշատը, Դվինը, Զարեհավանը, Զարիշատը, Նախճավանը, Տիգրանակերտը, Վանը և տասնյակ հազարավոր ընտանիքների գերեվարեց Պարսկաստան<sup>2</sup>:

387 թ. Հայաստանի բաժանումից հետո Արտազ գավառը և Պարսկահայք նահանգն անջատվեցին Մեծ Հայքից ու միացվեցին Ատրպատականին: Արտազի և Պարսկահայքի հայերը (փաստորեն նրանք բնիկներ են եղել) հետագայում կազմեցին Իրանի հյուսիսարևմտյան շրջանների և ամբողջ երկրի հայկական բնակչության հիմնական մասը: Պարսկաստանում հաս-

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 7.01.2018:

1 Տե՛ս Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Եր., «Զանգակ-97», 2002, էջ 205:

2 Տե՛ս Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց (Դ դպրություն, գլուխ ԾԷ), Եր., Երևանի համալսարանի հրատարակչություն, 1987, էջ 264– 266:

Ժ (ԺԶ) փարի, թիվ 1 (61), հունվար–մարտ, 2018  
ՎՎՎ համահայկական հանդես

տատված սելջուկյան թուրքերը, ապա նաև մոնղոլները նույնպես իրականացրին բռնագաղթ ու գերեվարություն: Ուստի 11-րդ դարից սկսած՝ գլխավորապես բռնագաղթի և գերեվարության ճանապարհով Պարսկաստանում առաջացան հայկական նոր գաղթավայրեր<sup>3</sup>:

1551-ին Թահմազ շահն արշավեց Վասպուրական, Էրզրում, Երզնկա և Բասեն, ավեր սփռեց, հազարավոր հայ ընտանիքների գերի տարավ<sup>4</sup>: Ադետալի հետևանքներ ունեցավ հատկապես շահ Աբբասի կազմակերպած զանգվածային բռնագաղթը, որն ուղղակի ամայացրեց Հայաստանը: 1604–1605-ին Հայաստանից (Արևելյան և Արևմտյան) տեղահանվեց և Պարսկաստան քշվեց 300 հազարից ավելի հայ (տեղ հասավ կեսից քիչ ավելին):

Անկախ այն բանից, թե հայերն ինչպես են հայտնվել Պարսկաստանում (կամավոր թե բռնությամբ)՝ նրանք այդ երկրում դարձել են մշտական ներկայություն: Ուստի ժամանակի ընթացքում ձևավորվել են «Պարսկաստանում (Իրանում) ապրող հայ, պարսկաստանցի հայ, Պարսկաստանի (Իրանի) հայ» հասկացությունները, կազմվել են նշանակիչ բառային միավորներ, որոնք առանձին ենթախումբ են կազմում «արտերկրի հայ» իմաստային խմբի շրջանակներում:

Այս հետազոտությամբ անդրադառնում ենք պատմական իրադարձությունների հետևանքով ծնունդ առած բառախմբի միավորներին (**պարսկահայ, իրանահայ, թեիրանահայ, փերիահայ** և այլն)՝ ստեղծելով իրանահայության «բառային պատկերը», որը կնպաստի հայրենիքից դուրս ապրող հայության՝ Սփյուռքի «բառային պատկերն» ամբողջականացնելուն: Պարզաբանելու ենք բառիմաստի ձևավորման պատմական հիմքերը և բառերի կազմությունը, ստեղծման մոտավոր ժամանակը, ձևաբանական արժեքներն ու իմաստները, գործածության ոլորտները, հաճախականությունը, բառարանային առաջին գրանցումները, դրանց բառարանագրական պատմությունն առհասարակ:

## 1. «Պարսկահայ / իրանահայ» իմաստային ենթախմբի միավորները

Հայախոս հանրությանը քաջածանոթ են **պարսկահայ** և **իրանահայ** բառերը, որոնք ընդհանուր անուններ են, բառախմբի հիմնական (միջուկային) միավորները, լայնորեն գործածվում են գրականության մեջ և մամուլում<sup>5</sup>, գրանցվել են հայերենի միալեզվյան և թարգմանական բառարաններում: **Պարսկահայ**-ը և **իրանահայ**-ը «երկրանուն+հայ» բառակազմական կաղապարի իրացումներ են. մի դեպքում բառի առաջին բաղադրիչ է դարձել Պարսկաստան երկրանունը, մյուս դեպքում՝ Իրանը: Ի դեպ, պաշտոնական մակարդակում (Հայաստանում և Իրանում) գործածվում է գերազանցապես **իրանահայ**-ը, ժողովրդախոսակցական մակար-

3 Տե՛ս **Աբրահամյան Ա. Գ.**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Եր., «Հայպետհրատ», 1964, էջ 237:

4 Տե՛ս **Ալօյաձեան Ա.**, Պատմություն հայ գաղթականության. հայերու ցրումը աշխարհի զանազան մասերը, հատ. Գ, Գահիրե, 1961, էջ 133:

5 **Պարսկահայ** բառույթը ԱՐԵՎԱԿ-ում՝ Արևելահայերենի ազգային կորպուսում ([www.eanc.net](http://www.eanc.net)), հանդիպում է 254, իսկ միայն **իրանահայ** բառաձևը՝ 416 համատեքստում:

դակում՝ **պարսկահայ-ը (իրանահայ-ը՝ ոչ):**

Մի շարք բառեր կազմվել են «քաղաքանուն+հայ» մասնակաղապարով. բառակազմական հիմք են դարձել Իրանի հայաշատ քաղաքների անունները: Դրանք են՝ **թեհրանահայ, թավրիզահայ, աբադանահայ, շիրազահայ**, տարբերակներով հանդես եկող **ջուղահայ / նորջուղահայ**, ինչպես նաև **սպահանահայ**:

Երեք բառ կազմվել է «գավառանուն+հայ» մասնակաղապարով. այստեղ էլ, բնականաբար, բառակազմական հիմք են դարձել Իրանի հայաշատ գավառների անունները: Դրանք են՝ **փերիահայ, ուրմիահայ, սալմաստահայ**:

Բացի երկրանուն հիմքով կազմված **պարսկահայ-ից** և **իրանահայ-ից՝** մյուս բառերը հաճախական չեն, գործածվում են հատկապես մամուլում (արևելահայերեն և արևմտահայերեն), երբեմն նաև գիտական (պատմագիտական, ազգագրական և այլն) գրականության մեջ: Սրանք հայերենի բառարաններում չեն գրանցվել, անգամ այն դեպքում, երբ բառը տասնամյակների պատմություն ունի: Հմմտ. «**Թեհրանահայ** համայնքի ճնշող մեծամասնությունը արհեստավորներ են ..., զգալի թիվ են կազմում ձեռնարկատերերը, պետ. հիմնարկներում ծառայող պաշտոնյաները...» («Հայկական սովետական հանրագիտարան», հատ. 4, Եր., 1978, էջ 164)<sup>6</sup>:

Հարկ է նշել, որ քաղաքանուններից **հայ** բաղադրիչով կազմված բառեր բառարաններում հազվադեպ են արձանագրվել՝ **պոլսահայ, թիֆլիսահայ, փարիզահայ**: Սա տրամաբանական է. Կ. Պոլիսը արևմտահայության քաղաքական, հոգևոր, մշակութային, տնտեսական կյանքի կենտրոնն էր, իսկ Թիֆլիսը նույնպիսի դեր ուներ արևելահայ իրականության մեջ, Փարիզը՝ 20-րդ դարի 20-40-ականներին՝ սփյուռքահայ կյանքում: Թեհրանը երբեք այդպիսի դերակատարում չի ունեցել արևելահայ իրականության մեջ:

Բառախմբի միավորների բառարանագրման կարիքը թերևս չկա, բացի մասնավոր բնույթի բառարաններից կամ էլեկտրոնային բառաշտեմարաններից:

Երբ են կազմվել «Պարսկաստանի հայ» նշանակող բառային միավորները: Դրանք չեն արձանագրվել նախաաշխարհաբարյան փուլերում, վկայված չեն հայերենի այդ գոյավիճակների բառապաշարն ամփոփող բառարաններում: Այս բառերն աշխարհաբարյան իրողություններ են, ինչպես որ **հայ** վերջնաբաղադրիչով մյուս բոլոր բառերը:

Ժամանակագրական առումով առաջինը **պարսկահայ-ն** է: Սա բնագրային հետևյալ օրինակի հիման վրա («Բայց **պարսկահայք**<sup>7</sup> մնացին տգիտության մահահրավեր խավարի մեջ»<sup>8</sup>, որ 1867 թ. գործածություն է) համարվել է 19-րդ դարի կեսերի ծնունդ<sup>9</sup>: Մենք կարող ենք մատնանշել շատ ավելի վաղ վկայության. «ուրեմն և այն նախակարգեալ իշխանք՝ որք

6 Մյուս կողմից էլ, իհարկե, չմոռանանք, որ չորս տասնամյակից ավելի մեզանում հայերենի ընդարձակ նոր բառարաններ (բացատրական, ուղղագրական և այլն) չեն հրատարակվել:

7 **Պարսկահայ** բառի գրաբարածն հոգնակին՝ **պարսկահայք**, համանունություն է կազմում **Պարսկահայք** տեղանվան հետ:

8 **Քաֆֆի**, Երկեր, հատ. 1, Եր., «Հայետհրատ», 1962, էջ 56:

9 Տե՛ս **Նավոյան Ռ. Բ.**, Ակնարկներ 19-րդ դարի 50-80-ական թթ. աշխարհաբարյան նորակազմությունների ուսումնասիրության բառարան, Եր., «Լիմուշ», 2011, էջ 233:

ի յունաց **պարսկահայ** կոչին, էին հայք՝ և ո՛չ թէ պարսիկք»<sup>10</sup>: 18-րդ դարի վերջին քառորդի գրաբար է: Բառն այստեղ նշանակում է «Պարսից տերության հպատակ հայ»<sup>11</sup>: Փաստորեն հայերեն բառի ձևավորման հիմքում ընկել է հունարեն համապատասխան կազմությունը:

Բառախմբի մյուս միավորների համար ևս կարող ենք վաղ գործածությունների թվականներ նշել: Օրինակ՝ **ջուղահայ**-ի համար Արամ Երեմյանի մի գրքույկի վերնագիրը՝ «Փշրանքներ **ջուղահայ** և հնդկահայ բանահիւսութիւնից»։ լույս է տեսել 1930-ին Վիեննայում<sup>12</sup>: Բայց **պարսկահայ**-ի համեմատ դրանք բավականին նոր են:

**Հայ** վերջնաբաղադրիչով բառեր բաղադրվել են Իրանի հայաշատ ոչ բոլոր քաղաքների և գավառների անուններից, այլ միայն նրանցից, որոնցից քիչ թե շատ բարեհունչ ձևեր են կազմվել: Այլ դեպքերում գործածվում են «որևէ տեղացի» նշանակող ածանցավոր ձևեր, ինչպես՝ **խոյեցի, մակվեցի**, բրբ. **ղ՞րղ՞ղեցի** (< **ղարաղաղցի**) և այլն, կամ էլ բառակապակցություններ, ինչպես՝ **Չարմահալի, Ղարաղաղի, Ռեշտի, Ղարաղանի, Ղազվինի հայ** և այլն:

Բառերի գործածության դեպքերը վերաբերում են՝ ա) տվյալ քաղաքում (կամ գավառում) ներկայում ապրողներին, օրինակ՝ **թեհրանահայ**, բ) տվյալ քաղաքից (կամ գավառից) ելածներին, այդ վայրերի հայրենակցական միությունների անդամներին, որոնք ապրում են հայրենիքում և այլուր, օրինակ՝ **փերիահայ**:

Առանձին անդրադառնանք այդ բառերին:

**Թեհրանահայ**: Իրանի ներկայիս մայրաքաղաքում հայերը բնակություն են հաստատել 18-րդ դարի երկրորդ կեսին. 1857-ին այստեղ ապրում էր 575 հայ ընտանիք (մոտ 3 հազար մարդ): 1978 թ. Թեհրանում ապրել է 110 հազ. հայ, սակայն 1979-ի Իսլամական հեղափոխությունից հետո հայության թիվը խիստ նվազել է: 2003-ի տվյալներով թեհրանահայերը 50 հազ. են, այժմ՝ ավելի քիչ:

**Թեհրանահայ-ը հայ** վերջնաբաղադրիչով մյուս բառերի նման խոսքիմասային երկու արժեք ունի. ածականի՝ «Այս ծրագիրը ... ի կատար ածվեց **Թեհրանահայ** գրական շրջանակի և Հայ մշակութային «Սիփան» միության միացյալ ջանքերով» («Ազգ», 19.01.2005) և գոյականի՝ «**Թեհրանահայերի** ցույցը 1990-ի ապրիլի 24-ին» («Հայ սփյուռք» հանրագիտարան, Եր., 2003, էջ 239): Բառախմբի մյուս միավորների համեմատ հաճախական է:

**Թավրիզահայ**: 13-15-րդ դարերում Թավրիզում (հայկական աղբյուրներում՝ Դավրեժ) եղել է մեծաթիվ և բարգավաճ հայ համայնք: Թավրիզահայերից շատերը 1829-1830-ին գաղթել են Ռուսաստանի կազմ անցած Արևելյան Հայաստան, և 1830-ին այս քաղաքում կար ընդամենը 40 տուն

10 **Հ. Միքայել Չամչեանց**, Պատմություն Հայոց, հատ. Բ, Վենետիկ, 1785, էջ 519:

11 Հմմտ. «... մատենագիրք յունաց կոչեն զայսոսիկ իշխանս Բերսարմենիոս՝ այսինքն պարսկահայ: Այլ սակայն նոքա պարսկահայ ասելով՝ ոչ երբէք իմանան զպարսիկս՝ զորս բերսա կոչեն. այլ՝ զայնոսիկ հայս, որք էին ընդ իշխանութեամբ պարսից ՚ի բաժին նոցա, այսինքն զբնակիչս մեծին հայոց» (**Հ. Միքայել Չամչեանց**, նշվ. աշխ., էջ 517): Նաև սա՝ Ներսես պատրիկին հույն պատմիչները կոչում էին «պարսկահայ», այսինքն՝ «Պարսից պետության հպատակ հայ» (**Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. 4, Եր., Պետական համալսարանի հրատարակչություն, 1948, էջ 39):

12 ԱՐԵՎԿԱ-ն ունի **ջուղահայ**-ի գործածության ընդամենը երկու օրինակ (վերջին տարիների մամուլից):

հայ: Երբ նախանցյալ դարի երկրորդ կեսին իրանահայությանն արտոնություններ են շնորհվել, Թավրիզի հայերի թիվը կտրուկ ավելացել է. 20-րդ դարասկզբին այստեղ ապրում էր մոտ 5500 հայ: 1946-ին Թավրիզի և շրջակայքի հայերը (մոտ 5300 մարդ) ներգաղթել են Խորհրդային Հայաստան: 1977-ին Թավրիզում ապրում էր շուրջ 6 հազ. հայ, 2003-ին՝ 2 հազ.:

**Թավրիզահայ**-ը գործածվում է ածականի և գոյականի արժեքներով, ինչպես՝ «**Թավրիզահայ** արծաթագործներ դարձեալ գնահատանքի արժանացան պետութեան կողմից» («Ալիք» օրաթերթ (Թեհրան), 30.08.2014) «**Թավրիզահայերի** թիվը նվազել կամ աճել է երկրում տեղի ունեցած քաղաքական զարգացումների ... համեմատ» («Հայ սփյուռք», էջ 242):

**Նորջուղահայ / ջուղահայ, սպահանահայ:** 17-րդ դարի սկզբին Իրանի Սպահան մայրաքաղաքի մոտ շահ Աբբասի տեղահանած բազմահազար հայությունը, գերազանցապես ջուղայեցիներ, հիմնեց Նոր Ջուղա քաղաքը: Հայկական քաղաքը կարճ ժամանակում բարգավաճեց, 1620-ականներին ուներ 30 հազարից ավելի հայ բնակիչ: Աֆղանների 1722-ի արշավանքից շեն քաղաքն ավերվեց, հայերը գաղթեցին Հնդկաստան, Հոլանդիա և այլ երկրներ: 17-18-րդ դարերում քաղաքը հայկական մշակույթի կարևոր կենտրոններից էր: 19-րդ դարի 30-ականներին Նոր Ջուղայում բնակվել է շուրջ 4 հազ., 1958-ին՝ 5 հազ., 1979-ին՝ 10 հազ. հայ: Այժմ Նոր Ջուղան Սպահանի մի թաղամասն է, որտեղ ապրում է շուրջ 7 հազ. հայ:

«Նորջուղայեցի՝ Նոր Ջուղայի հայ» իմաստն արտահայտելու համար գործածվում են տարբերակային բառեր:

**Ջուղահայ**-ի հիմքը՝ Ջուղա-ն է, և քանի որ հին Ջուղան<sup>13</sup> վաղուց ի վեր հայաբնակ չէ, **ջուղահայ** ասելով՝ հասկացվում է «Նոր Ջուղայի բնակիչ (բնականաբար հայ)»։ «Հետազոտելով **ջուղահայ** նշանավոր գերդաստանների պատմությունը, նա առաջնություն է տալիս Շահրիմանյանների խոշոր առևտրական տանը, որը հրապարակ է իջել Նոր Ջուղայի պատմության հենց սկզբնավորման շրջանում» («Ազգ», 28.06.2008): Բառը գործածվում է ինչպես ածականի, այնպես էլ գոյականի արժեքով. «**Ջուղահայերը** Հնդկաստանում հաստատվել են ամենատարբեր պատճառներով» («Էջմիածին», 1998, ԺԲ, էջ 57): Ինչպես վերևում ցույց տվեցինք, բառը հայտնի է շատ ավելի վաղ գործածությամբ (կա նաև **ջուղահայություն** հավաքական գոյական):

**Նորջուղահայ**-ի հիմքում ընկած է հայաքաղաքի բուն անվանումը. «1946-ից սկսվել է **նորջուղահայերի** ներգաղթը Հայաստան» («Հայ սփյուռք», էջ 246): Բառը համեմատաբար նոր է, ամենայն հավանականության արդի ժամանակի: Մինչ այդ մի քանի դար շարունակ «ջուղայեցի» ասելով արդեն իսկ հասկանում էինք «Նոր Ջուղայի՝ նորջուղայեցի հայ», քանի որ հայերի հիմնադրած քաղաքը բացառապես հայաբնակ էր, ուստի **հայ** բաղադրիչը կցելու կարիք չկար: Հմնտ. «... շուրջ 450-ը տպագրվել է կան Նոր Ջուղայում, կան **նորջուղայեցիների** բացած տպարանում, կան նրանց դրամական աջակցությամբ» («Էջմիածին», 1998, ԺԲ, էջ 58): Ժամանակի ընթացքում, երբ Նոր Ջուղան ներառվեց Սպահանի շրջագծի մեջ,

13 Հայագիտության մեջ **հին Ջուղա** բառակապակցությունը գործածության մեջ մտավ Նոր Ջուղայի հիմնադրումից և վերելքից հետո: Տե՛ս **Գյուրջիյան Գ.**, Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքի դպրոցը. «Հայագիտությունը դպրոցում», 2015, N 1, էջ 7:

փոխվեց նրա բնակչության ազգային կազմը, դրա պատճառով էլ թերևս կազմվեց **նորջուղահայ**-ը<sup>14</sup>:

**Սպահանահայ**-ը փոքր-ինչ այլ է: Սա կարող ենք ընկալել ինչպես «Սպահան քաղաքի բնակիչ՝ սպահանցի հայ», այնպես էլ «Սպահանի նահանգում ապրող, այդ նահանգից սերած հայ»: Հմմտ. «Գյուղի բնակիչներին ամեն մեկն էլ **սպահանահայ** պապիկի նման ունի իր համոզմունքը» («168 Ժամ», 20.10.2009): Արդի ըմբռնմամբ նորջուղայեցին սպահանցի հայն է:

**Աբաղանահայ:** Աբաղանի հայ համայնքը սկզբնավորվել է 1909-ին, երբ Պարսկաստանի տարբեր մասերից շատ հայեր ծառայության են անցել Անգլո-իրանական նավթային ընկերությունում: Առաջին աշխարհամարտի տարիներին այստեղ հաստատվել են արևմտահայեր: 1923-ին հայերի թիվը 400 էր, 1938-ին՝ 2 հազ., 1969-ին՝ 5 հազ.: Համայնքը հետագայում նոսրացել է, ապա՝ հատկապես 1980-1988-ի իրանա-իրաքյան պատերազմից հետո, մարել:

**Աբաղանահայ**-ը խիստ հազվադեպ է, գործածվելու հեռանկարից գրեթե զուրկ: Օրինակ՝ «Ու **աբաղանահայ** գաղութը ջանք չի խնայեր իր ազգային-հասարակական պարտականությունները կատարելու» («Ալիք», 19.02.1933): Մեր ունեցած բնագրային օրինակում բառը գործածվել է ածականի արժեքով, չի բացառվում նաև գոյականի արժեքով կիրառությունը:

**Շիրազահայ:** Շիրազ քաղաքում հայ համայնքը ձևավորվել է շահ Աբբասի կազմակերպած մեծ բռնագաղթից հետո՝ 17-րդ դարի սկզբներին: Մյուսների համեմատ նվազ հայտնի է: Այսօր Շիրազում ապրում է շուրջ երեք տասնյակ հայ:

**Շիրազահայ**-ը հազվադեպ է: Օրինակ՝ «Հովուական այցելություն **շիրազահայ** համայնքին» ([www.norjugha.ir](http://www.norjugha.ir)): Ուշագրավ է, որ կազմվել է **շիրազահայություն** հավաքական գոյականը (**թեհրանահայություն, թավրիզահայություն** բառերը սովորական են, քանի որ բազմանդամ և կազմակերպված համայնքների հայությունն են անվանում):

**Փերիահայ:** Սպահանի նահանգի Փերիա գավառում հայերը հաստատվել են 17-րդ դարի սկզբին շահ Աբբասի կազմակերպած զանգվածային բռնագաղթի հետևանքով: Հայերն այստեղ հիմնել են քանից ավելի գյուղեր: Փերիան հայաշատ գավառ էր. 1918-ին 26 գյուղում ապրում էր 13 հազարից ավելի հայ: 1946-ին շուրջ 16 հազ. հայերից 2400-ը ներգաղթել է հայրենիք: 1967-ին գավառում ապրում էր մոտ 10 հազ. հայ: Ներգաղթ եղել է նաև 1960-1970-ականներին: 1979-ի հեղափոխությունից հետո գավառը հայաթափվել է (մնացել է մի քանի հայ ընտանիք ունեցող Բոլորանը միայն):

**Փերիահայ**-ը համանման կառուցվածք ունեցող մյուս բառերի պես տարարժեք է (ած. և գոյ.), ինչպես՝ «Տեղի ունեցավ **Փերիահայ** աշուղներ» համերգ-երեկոն» (<http://armtur.am/220469/>): «**Փերիահայերի** երգիծական մանրապատումների գիրքը բանահավաքչության նվիրյալ հոգևորական Բախտիկյանն անվանել է «Փերիո խելացին»» («Պատմաբանասիրական

14 Սպահանի ազգային առաջնորդարանի տեղեկատուի մեջ **նորջուղահայ**-ն ընդունված չէ (ըստ 2012-2017 թվականների տվյալների), բայց **նորջուղայեցի** հազվադեպ հանդիպում է, ինչպես՝ «Նոր Ջուղայի հայոց ազգ. կրթահամալիրի «Ալենուշ Տերեան» դահլիճում կազմակերպել էր «Նոր Ջուղա և **նորջուղայեցիներ**» խորագրով բանախոսական երեկոյ» («Նոր Ջուղա», մարտ-ապրիլ, 2017, էջ 8):

հանդես», 2017, N 1, էջ 89):

**Սալմաստահայ:** Սալմաստը (հայոց Զարեհավանն է) արիեստագործության կենտրոն էր, առևտրական ուղիների կայանակետ: 12-րդ դարում հիմնական բնակիչները հայերն էին, հյուսիսարևմտյան Իրանի հայոց հոգևոր կենտրոնն էր: Այդպես էր մինչև 1826-1828-ի ռուս-պարսկական պատերազմը, որից հետո հազարավոր հայեր գաղթեցին Ռուսաստանին միացված Արևելյան Հայաստան: 20-րդ դարի սկզբին Սալմաստում շուրջ 10 հազ. հայ կար: 20-րդ դարի 10-ական թվականներին թուրքական զորքերի իրականացրած կոտորածից հետո շուրջ 3000 հայ գաղթեց հայրենիք: 1946-ի հայրենադարձությունից հետո գավառում սակավաթիվ հայեր մնացին (մի մասը տեղափոխվեց Թավրիզ և Թեհրան):

**Սալմաստահայ**-ը բավական ուշ է կազմվել (համանման բառերի նմանակությամբ), հազվադեպ է: Օրինակ՝ «2013 թ. հոկտեմբերի 20-ին ԱՄՆ-ի Արևմտեան թեմի առաջնորդարանի «Տիգրան և Զարուհի Տէր-Ղազարեան» սրահը դարձել էր **սալմաստահայերի** ժամադրավայրը» («Ալիք», 15.01.2014): Այստեղ բառն ունի գոյականի արժեք, բնականաբար կարող է կիրառվել նաև ածականի արժեքով:

**Ուրմիահայ:** Ուրմիա քաղաքն ու մարզը արաբ հեղինակ Ալ-Մակդիսին անվանել է «հայկական բնակավայր», հայ պատմիչ Թովմա Մեծոփեցին (1378-1446)՝ «հայկական քաղաք»<sup>15</sup>: 20-րդ դարի սկզբին այստեղ ապրել է 5-6 հազ. հայ: Հայաբնակ էին Ուրմիայի չորս տասնյակ գյուղեր: 1914-1918-ին Ուրմիայի հայերը ևս ենթարկվեցին թուրքական կոտորածների, և 2600 ուրմիահայ գաղթեց Հայաստան: 1948-ին Ուրմիայի 29 գյուղերում կար շուրջ 3000 հայ<sup>16</sup> միայն, քանի որ 1946-ին շատերը ներգաղթեցին հայրենիք: Հայերի զգալի մասը տեղափոխվեց Իրանի այլ վայրեր: Այժմ Ուրմիա քաղաքում և գյուղերում սակավաթիվ հայեր են ապրում:

**Ուրմիահայ**-ը հազվադեպ է, գործածվում է հատկապես մամուլում (սփյուռքյան, այդ թվում՝ արևմտահայերեն), ինչպես՝ «**Ուրմիահայ** զոյգ կրթօջախներում՝ Ուրմիայի հայոց ազգային դպրոցում և Հայ օգնության միության «Նայիրի» մանկապարտեզում տեղի ունեցան Ուսուցչաց գնահատական հանդիսություններ» («Ալիք», 24.05.2015): «Արա Ազիզեան **ուրմիահայ** համայնքին երախտագիտությունը յայտնեց Իրանի Իսլամական Հանրապետության» («Ազդակ» օրաթերթ (Պէյրուք), 14.03.2013): Գոյականի արժեքը թվում է չիրացված:

Քաղաքանուններից և գավառանուններից բաղադրված բառերը որոշակի պատկերացում են տալիս Իրանում հայության տեղաբաշխման և երկրում այս կամ այն համայնքի դերի մասին: Իհարկե, հնարավոր են նաև դիպվածային կազմություններ՝ թաքնված մամուլի էջերում և այլուր:

## 2. Բառարանային մշակումը

Անդրադառնանք քննարկվող բառախմբի միավորների բառարանագրման ընթացքին և բառարանային մշակման հարցերին: «Պարսկաստանցի

<sup>15</sup> «Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.)», հատ. 2, եր., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2003, էջ 226-227 («Իրան» բաժնի հեղինակ՝ Հ. Մարտիրոսյան):  
<sup>16</sup> Տե՛ս «Հայ սփյուռք» հանրագիտարան, եր., «Հայկական հանրագիտարան», 2003, էջ 247:

հայ» նշանակող բառերից բառարաններում գրանցվել են միայն ընդհանուր անվանումները՝ **պարսկահայ**-ը և **իրանահայ**-ը՝ կազմված հարևան երկրի զույգ անուններից:

Բառարանագրական քիչ թե շատ հարուստ պատմություն ունի **պարսկահայ**-ը, որն առաջին անգամ (ըստ մեր տվյալների) գրանցվել է Հ. Դադբաշյանի հայ-ռուսերեն բառարանում<sup>17</sup>: Քանի որ բառացանկը կազմելիս կիրառվել է փնջային սկզբունքը, **պարսկահայ**-ը գետեղվել է **պարսիկ** գլխաբառի ներքո՝ նույնահիմք բառերի փնջում՝ **պարսկաբարոյ, պարսկադէն, պարսկական, պարսկահպատակ, պարսկանալ, պարսկերէն** և այլն: Թարգմանվել է *персидский армянинъ*, միայն գոյականի արժեքով:

**Պարսկահայ**-ից բացի հիշյալ բառարանում արձանագրվել են «հայրենիքից դուրս ապրող հայ» նշանակող **եգիպտահայ, թ(ու)րքահայ, կովկասահայ, ո(ու)սահայ, տաճկահայ** բառերը: Այս բառընտրությունը պատահական չէ: Երկու մասի բաժանված հայությունը 19-րդ դարի կեսերից սկսեցին անվանել այն տերության անունով, որի կազմում գտնվում էր Հայաստանի տրոհված մասը: Օսմանյան Թուրքիայի (կամ Տաճկաստանի), այդ թվում նաև Արևմտյան Հայաստանի հայերին հաճախ անվանում էին **թ(ու)րքահայ / թիրքահայ** կամ **տաճկահայ**: Ռուսական կայսրության, ինչպես և այդ տերության կազմի մեջ մտած Արևելյան Հայաստանի հայերին անվանում էին **ռուսահայ**<sup>18</sup> (Կովկասի հայերին՝ նաև **կովկասահայ**): Ի դեպ, նշված բառերը ժամանակի ընթացքում ձեռք բերեցին «արևմտահայ» և «արևելահայ» իմաստները:

Հայության երրորդ ստվար հատվածը դարերով ապրում էր Պարսկաստանի տիրապետության ներքո՝ բնիկ հայկական հողերի վրա և երկրի այլ մասերում, ուստի և բնական է **պարսկահայ** բառի ընդգրկումը բառացանկ<sup>19</sup>:

Գրեթե նույն ժամանակահատվածում՝ 1915-ին, արդեն արևմտահայ իրականության մեջ, **պարսկահայ**-ն իբրև գլխաբառ արձանագրվել է Գ. Լուսինյանի և Կ. Բասմաջյանի հայերեն-ֆրանսերեն բառարանում՝ *Arménien de Perse* («Պարսկաստանի հայ») թարգմանությամբ<sup>20</sup>: Եթե հաշվի առնենք, որ Դադբաշյանի բառարանում **պարսկահայ**-ը բառափնջի միավոր էր, ապա փաստացի այս բառարանն է առաջինը, որտեղ բառը որպես գլխաբառ է ներկայացվել:

Հայաստանում հրատարակված բառարաններից **պարսկահայ**-ն առաջին անգամ գրանցվել է հայ-քրդերեն փոքրածավալ բառարանում<sup>21</sup>: Այստեղ բառերի խոսքիմասային արժեքներն առհասարակ չեն տրվում, այլ միայն թարգմանությունը՝ *հեւ ձգթոմ [ֆրլե ան ցան. բառացի՝ «պարսիկի հայ»]*:

**Պարսկահայ** բառն արձանագրվել է հայաստանյան և սփյուռքյան

17 Տե՛ս **Դադբաշյան Յ.**, Լիակատար բառարան հայերենից ռուսերեն, Թիֆլիս, 1911:

18 Տե՛ս **Գյուրջինյան Գ., Ռուսահայ** բառի բառարանագրական քննությունը, Գիտական հոդվածների ժողովածու (սվիրվում է Հր. Աճառյանի ծննդյան 140-ամյակին), Եր., «Ասողիկ», 2016, էջ 81-95:

19 **Եգիպտահայ**-ն անվանում է Եգիպտոսի կենսունակ և մարդաշատ համայնքի ներկայացուցիչներին:

20 Տե՛ս **Լուսինյան Գ., Բասմաջյան Կ. Յ.**, Առձեռն բառարան հայերեն աշխարհիկ լեզուի ֆրանսերեն, Կ. Պոլիս, 1915, էջ 669:

21 Տե՛ս **Պետոյան Վ., Ավդալ Ա.** և ուրիշներ, Բառարան հայերենից քրդերեն լեզվի, Եր., «Պետհրատ», 1933: Ի դեպ, այդ բառարանում «Հայաստանից դուրս ապրող հայ» նշանակող միակ բառն էր: Ս. Սիաբան-դովի և Ա. Չաչյանի «Հայ-քրդերեն բառարանում» (Եր., Հայաստանի պետական հրատարակչություն, 1957), **պարսկահայ**-ը կլա:



թարգմանական ուրիշ բառարաններում ևս<sup>22</sup>: Այսպես:

Մ. Գոյումձյանի (արևմտա)հայերեն-անգլերեն բառարանում<sup>23</sup> **պարսկահայ**-ը թարգմանվել է Persian Armenian<sup>24</sup>: «Արտերկրի հայ» իմաստային խմբի բառերը թարգմանելիս բառարանագիրը որդեգրել է տարբեր կառույցներ՝ «օտար երկրանուն / ազգության անուն+հայ»: Rumanian Armenian - **ռումանահայ**, «այսինչ երկրում ապրող հայ»: Armenian living in Poland - **լեհահայ**, «հայ+օտար երկրանուն / ազգության անուն»: Armenian-American - **ամերիկահայ** և այլն: Թե **պարսկահայ**-ի կամ նմանատիպ որևէ բառի դեպքում ինչու է թարգմանության հենց այդ տարբերակն ընտրվել, դժվար է ասել:

Հայ-ադրբեջաներեն բառարանը<sup>25</sup> բառերի խոսքիմասային արժեքներն առհասարակ չի նշում, այլ միայն թարգմանությունն է տալիս, ընդ որում կիրառվել է միևնույն մոտեցումը՝ **պարսկահայ** - Иран ермәниси, **պոլսահայ** - Стамбул ермәниси և այլն (բացառությամբ՝ **լեհահայ** - польшалы ермәни):

Ակադեմիական «Հայ-ռուսերեն բառարանի» կազմողները **հայ** վերջնաբաղադրիչով բառերը, այդ թվում և **պարսկահայ**-ը, միայն գոյականի արժեքով են թարգմանել, ընդ որում՝ քերականական տարատեսակ կառույցներով՝ **պարսկահայ** - армянин, проживающий в Иране, **թուրքահայ** - турецкий армянин, **հնդկահայ** - армянин, живущий в Индии, **հունահայ** - армянин из Греции<sup>26</sup>:

Ը. Թերեյանի հայերեն-իսպաներեն բառարանում համանման բառերը թարգմանվել են միասնական մոտեցմամբ, ինչպես՝ **պարսկահայ** - armenio de Persia, **թրքահայ** - armenio de Turquía, **լիբանանահայ** - armenio del Libano, **հնդկահայ** - armenio de la India և այլն<sup>27</sup>:

Առաջին (ու թերևս միակ) թարգմանական բառարանը, որտեղ առանձին բառահոդվածներով ներկայացվում են **պարսկահայ** և **լիբանանահայ** բառերը, Տ. Դավթյանի «Հայերեն-պարսկերեն բառարան» է<sup>28</sup>: Կարևոր է, որ թարգմանական բառարանում զետեղված են «տվյալ բառարանում ներկայացված լեզվի երկրում ապրող հայ» նշանակող հիմնական բառերը: **Պարսկահայ**-ը թարգմանվել է ارمنی ایرانی [լիբանի-ե-արմանի] «լիբանցի հայ», **լիբանահայ**-ը՝ ایرانی ارمنی «լիբանցի հայ, իրանահայ», «լիբանահայերին առնչվող՝ վերաբերող» (ածականի իմաստով)<sup>29</sup>:

Անդրադառնանք «Պարսկաստանի հայ» հասկացության նշանակիչ բառային միավորների բառարանային մշակմանը հայերեն միալեզվյան

22 Հմմտ. Գյուրջիյան Գ., «Արտերկրի հայ» իմաստային խմբի բառերի ներկայացումը հայերեն թարգմանական բառարաններում, «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», 2017, հատ. 2, էջ 59-77:

23 Տե՛ս Գոյումձեան Մ.Կ., Ընդարձակ բառարան հայերէնէ անգլիերէն, Գահիրէ, 1950: Մ. Գոյումձյանի բառարանները համառոտվել, արդիականացվել և հրատարակվել են մեկ գրքով (Գոյումձեան Մ. Կ., Գրպանի նոր բառարան. անգլերէն-հայերէն, հայերէն-անգլերէն, պժմէականացուց Լ. Թորոսեան, Պէյրոյթ, «Շիրակ», 2002), որտեղ զեղչվել են, օրինակ, **պարսկահայ**-ը և **ամերիկահայ**-ը, սակայն մնացել են **թրքահայ**, **ռուսահայ**, **ֆրանսահայ** բառերը: Այս մոտեցումը դժվար է բացատրել:

24 Այսպես է թարգմանված նաև հայերեն-անգլերեն հայաստանյան մի բառարանում (տե՛ս Բարաթյան Ն. Ռ., Հայերեն-անգլերեն բառարան, Եր., «Մակմիլան-Արմենիա», 2002, էջ 458):

25 Տե՛ս Բաղդամյան Ռ.Հ., Խալիլով Ի.Հ., Հայ-ադրբեջաներեն բառարան, «Լույս», Եր., 1978:

26 Տե՛ս Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Հայ-ռուսերեն բառարան, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1984:

27 Տե՛ս Թէքէեան Յ., Բառարան հայերէնէ սպաներէն, Բուենոս Այրես, «Akian», 1984:

28 Տե՛ս Դավթյան Տ., Հայերեն-պարսկերեն բառարան, Եր., «Անկյունաքար», 2011, էջ 349, 134:

29 Այս հարցում մեզ օժանդակելու համար շնորհակալություն ենք հայտնում իրանագետ Վ. Ոսկանյանին:

բառարաններում<sup>30</sup>:

«Երկրանուն+հայ» և «տարածաշրջանի անուն+հայ» բառակազմական մասնակաղապարներով կազմված բառերի արձանագրումը հայերենի միալեզվյան բառարաններում սկզբնավորել է Ստ. Մալխասյանը<sup>31</sup>: Բառացանկում ընդգրկված են այդ կարգի մի շարք բառեր՝ **ամերիկահայ, անգլիահայ, եգիպտահայ, թ(ու)րքահայ, լեհահայ, կովկասահայ, հնդկահայ, հունգարահայ, ռումանահայ** (ռումինահայ), **ռուսահայ**: Հստակ է, որ Մալխասյանցն ընտրել է հայկական այն գաղթավայրերի և համայնքների ներկայացուցիչների անունները, որոնք նկատելի դերակատարում են ունեցել հայության քաղաքական, տնտեսական, հոգևոր-մշակութային և ազգային կյանքում առհասարակ: Դրանք հայության այն հատվածներն են, որոնք անցյալում, ինչպես և բառարանը կազմելու ժամանակաշրջանում հայաշատ և ազդեցիկ են եղել, նշանակիչ բառերը՝ գործածական: Տարօրինակ է, բայց փաստ, որ **պարսկահայ**-ը (ոչ էլ **իրանահայ**-ը) իբրև գլխաբառ այս բառարանում ընդգրկված չէ:

Ուշադրություն է գրավում, սակայն, **ռուսահայ**-ի գործածությունը ցուցադրող այս նախադասությունը՝ «Հայերն ըստ հպատակութեան բաժանվում էին երեք խոշոր հատուածի, ռուսահայեր, տաճկահայեր և պարսկահայեր»<sup>32</sup>: Բառարանագիրն ինքնահնար նախադասության մեջ գործածել է **տաճկահայ** և **պարսկահայ** բառերը (ի դեպ, **տաճկահայ**-ը ևս նշված բառարանում գլխաբառ չի դարձել), որոնք վերոհիշյալ բառերի նման են, երկուսն էլ լայն տարածում ունեն, նշանակում են հայության սովոր հատվածների ներկայացուցիչների (իբրև գոյականներ) կամ էլ նրանց վերաբերող՝ առնչվող իրողություններ (իբրև ածականներ):

Ա. Սուքիասյանը հոմանիշների բառարանում որպես հոմանշային զույգ ներկայացրել է **պարսկահայ** – **իրանահայ**-ը. սրանք կողք կողքի են դրվել նաև **հայ** բառահոդվածում, որտեղ տեսականիշ (բայց ոչ հոմանիշ) բառեր են՝ **սփյուռքահայ, արևելահայ, արևմտահայ, ռուսահայ, վրացահայ, վիրահայ, ամերիկահայ, եգիպտահայ** և այլն<sup>33</sup>: Ա. Սուքիասյանը նոր բառարանում վերանայել և ձշտել է իր նախկին մոտեցումը. **հայ** բառահոդվածում իբրև ենթաշարք առանձնացվել են **արևելահայ, արևմտահայ, սփյուռքահայ** բառերը՝ առանց տեսականիշ բառերի, առանձին բառահոդվածով պահպանվել է **պարսկահայ** – **իրանահայ** հոմանշային զույգը<sup>34</sup>:

**Պարսկահայ** բառի բառարանագրական պատմության մեջ կարևոր հանգրվան են ժամանակակից հայերենի (արևելահայերենի և արևմտահայերենի) ընդարձակ բացատրական բառարանները, որոնք լրացրել են Մալխասյանցի բառարանի բացը. սրանցում **պարսկահայ**-ը գլխաբառ է դարձել:

30 Հմտ. **Գյուրջինյան Գ.**, «Արտերկրի հայ» իմաստային խմբի բառերի բառարանագրական վերլուծությունը, «Էջմիածին», 2017, Ժ, էջ 74-105:

31 Տե՛ս **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հատ. 1-4, Եր., Հայկական ՍՍԹ պետական հրատարակչություն, 1944-1945:

32 Տե՛ս **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հատ. 4, Եր., 1945, էջ 165:

33 Տե՛ս **Սուքիասյան Ա. Մ.**, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր., Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1967, էջ 545, 361:

34 Տե՛ս **Սուքիասյան Ա. Մ.**, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Եր., Երևանի համալսարանի հրատարակչություն, 2009, էջ 581, 931:

Էդ. Աղայանի բացատրական բառարանում **պարսկահայ**-ը տրվել է չորս իմաստով, որոնցից առաջինը գոյականական է՝ «Պարսկաստանում՝ Իրանում ապրող կամ ապրած հայ»<sup>35</sup>: Իրանի շեշտումը կարևոր է, քանի որ 1935-ից այդ պետության պաշտոնական անվանումն է Իրան:

Բառի երկրորդ և երրորդ իմաստները ածականական են՝ «Պարսկաստանում ապրող հայերից կազմված՝ գոյացած» (**պարսկահայ գաղութ**), «Պարսկաստանի հայկական գաղութին հատուկ՝ վերաբերող» (**պարսկահայ թերթեր, դպրոց, բարբառ**):

Տարակուսանք է հարուցում չորրորդ՝ գոյականական իմաստը՝ հոգն. նշումով՝ **Պարսկահայեր** «Պարսկահայ գաղութի ամբողջությունը»: Սա բոլորովին ավելորդ է առաջին իմաստի առկայությամբ: Աղայանն այսպես չի վարվել համանման՝ «արտերկրի հայ» նշանակող մյուս բոլոր բառերի դեպքում. սա միակ բացառությունն է: Մյուս կողմից էլ հարկ է նշել, որ այս բառարանում ժողովուրդների, ազգերի, ազգությունների անունները գլխաբառերում գերազանցապես հոգնակիով են տրված, ինչպես՝ **ալբաններ, արաբներ, թուրքեր, հույներ, ռումիններ, ռումինացիներ, վրացիներ**, նաև **պարսիկներ, իրանցիներ** (բայց **ռուս**, առանց հոգնակիի):

Ակադեմիական բացատրական բառարանում<sup>36</sup> **պարսկահայ** բառահոդվածն ավելի լավ է մշակված: Բառը տրված է երկու իմաստով (ու արժեքով). գոյականի՝ «Պարսկաստանում՝ ապրող հայ» և ածականի՝ «Պարսկաստանում ապրող հայերին հատուկ, պարսկահայերի»: Սակայն այստեղ խախտվել է բառարանում ընդունված սկզբունքը. ներկայացվել են միայն ինքնահասարակության օրինակներ՝ մեկ նախադասություն (Պարսկահայերը թվով շատ են) և մեկ բառակապակցություն (Պարսկահայ բարբառ), երբ բնագրային օրինակներ գտնելու առանձնահատուկ դժվարություն թվում է, թե չպիտի լիներ:

Ուշագրավ է «Պարսկաստանում ապրած հայ» իմաստային բաղադրիչը. 1829-ի հայահավաքից հետո բազմաթիվ պարսկահայեր վերադարձան մայր հայրենիք, որտեղ նորեկներին և նրանց սերունդներին տեղացիները երկար ժամանակ «պարսկահայ» էին կոչում: Շատ դեպքերում ավանդույթը շարունակվում է առ այսօր:

Հայերենի բացատրական ընդարձակ բառարանները հրատարակվել են Պարսկաստանը պաշտոնապես վերանվանվելուց տասնամյակներ անց, սակայն նրանց բառացանկերում **իրանահայ**-ը չկա, թեպետ դրանցում հանդիպում են **իրան / իրան**- հիմքով այսպիսի կազմություններ՝ **իրանաբան, իրանաբանական, իրանացի, իրանուհի, իրաներեն, իրանիզմ**: Այս պակասը հարկավոր է լրացնել:

Արևմտահայերենի բացատրական երկհատորյա բառարանում<sup>37</sup> **պարս-**

35 Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., «Հայաստան», 1976, էջ 1207:

36 Տե՛ս Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատ. 4, Եր., Հայկական ՄՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1980, էջ 194:

37 Արևմտահայերենի մինչ այդ հրատարակված բառարաններում (**Պետրոս վրդ. Ճիզմէճեան**, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հատ. 1-2, Հալէպ, 1954-1957, **Քերովբեան Գ.**, Հայերէն բառգիրք աշխարհաբար լեզուի, Ստամբուլ, «Արաս», 2011 (Ա հրատարակությունը՝ 1962), **Տէր Խաչատուրեան Ա., Գանգրունի Հ., Տօնիկեան Փ. Կ.**, Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրութ, «Տօնիկեան և որդիք», 1968, **Անդրանիկ վրդ. Կռանեան**, Գործնական բառարան հայերէն լեզուի, Պէյրութ, «Շիրակ», 1970) **պարսկահայ**-ը և **իրանահայ**-ը բացակայում են (թերևս նաև Ստ. Մախաթայանցի բառարանի ազդեցությամբ):

**կահայ**-ը բացատրված է այսպես. «1. գ. Պարսկաստանի մէջ ծնած և ապրող հայ, 2. ան. Պարսկաստանի մէջ ապրող հայերէ կազմուած՝ գոյացած, 3. Պարսկաստանի հայկական գաղութին վերաբերող»<sup>38</sup>: Մեր կարծիքով երկրորդ իմաստն ավելորդ է առանձնացվել. առաջինը և երրորդը բավական էին: Բառահոդվածում նշված է **պարսկահայ**-ի հոմանիշը՝ **իրանահայ**, որն ուշագրավ իրողություն է: Սակայն **իրանահայ**-ը, թերևս հայաստանյան բառարանների հետևողությամբ, գլխաբառ չի դարձել:

Անհրաժեշտ է նշել, որ **իրանահայ**-ը հայերենի բառարաններում գլխաբառ դարձնելու ավանդույթ տակավին չի ձևավորվել, թեև, ինչպես տեսանք, ունենք դեպքեր, որոնք կարծեք «նախապատրաստում են» դա. հմմտ. նաև **պարսկահայ**-ի բացատրությունը Պ. Սևակի բառարանում՝ «Պարսկաստանի հայ, իրանահայ»<sup>39</sup>: **Իրանահայ**-ն անտեսվել և միայն **պարսկահայ**-ն է ներկայացվել հայերենի ուղղագրական բառարաններում<sup>40</sup>, հանգաբառարանում<sup>41</sup> և քերականական մի բառարան-տեղեկատուում<sup>42</sup>:

**Պարսկահայ**-ը զետեղված է հաճախականության բառարանի 2-1 հաճախականություն ունեցող բառերի ցանկում<sup>43</sup>, ոչ թե նվազող հաճախականության բառերի հիմնական ցանկում: Սա նշանակում է, թե այն բարձր հաճախականություն չունի: **Իրանահայ**-ը կրկին բացակայում է:

## Ամփոփում

Այսպիսով՝ կարող ենք հետևյալ **եզրակացություններն** անել:

«Պարսկաստանում ապրող հայ» նշանակող բառային միավորներն են՝ **պարսկահայ, իրանահայ, թեհրանահայ, թավրիզահայ, արադանահայ, շիրազահայ, ջուղահայ / նորջուղահայ, սպահանահայ, փերիահայ, սալմաստահայ, ուրմիահայ**: Այս բառերը ցույց են տալիս ինչպես տվյալ երկրում, գավառում, քաղաքում ապրող հայերին, այնպես էլ այդտեղից սերածներին:

«Պարսկաստանի հայ» նշանակող բառերը ժամանակագրորեն աշխարհաբարյան շրջանի իրողություններ են: Առաջինը կազմվել է **պարսկահայ**-ը (18-րդ դարի վերջին քառորդ), մնացածն ավելի ուշ կազմություններ են:

**Պարսկահայ**-ը և **իրանահայ**-ը կազմվել են «երկրանուն+հայ» կաղապարով, սրանք ընդհանուր անուններ են: Քաղաքանուններից են կազմվել **թեհրանահայ, թավրիզահայ, արադանահայ, շիրազահայ, ջուղահայ /**

38 «Հայոց լեզուի նոր բառարան», հատ. 2, աշխատասիրեց **Արտ.Տէր Խաչատուրեան**, Պէյրոս, «Տօնիկեան և որդիք», 1992, էջ 702:

39 **Պապոյան Արտ. Հ.**, Պարույր Սևակի աշխատությունների և թարգմանությունների բառարան, Եր., Երևանի համալսարանի հրատարակչություն, 1986, էջ 433:

40 Տես **Ղարիբյան Ա.Ս., Շեկյան Գ.Ս.**, Գարոցական ուղղագրական բառարան, Եր., «Լույս», 1981, **Քարսեղյան Հ.Ս.**, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Եր., «Լույս», 1973, **Նազարյան Ռ., Գյողակյան Ա.**, Հայերեն ուղղագրական դպրոցական բառարան, Եր., «Զանգակ-97», 2004: Ուղղագրական մյուս բառարաններում չկան բառերից ոչ մեկը, ոչ մյուսը (նշենք, որ ոմանք **իրանահայ**-ը սխալմամբ արտասանում են **թ**-ով. հենց դա արդեն իսկ հիմք է տալիս բառը ուղղագրական բառարանում գրանցելու):

41 Տես **Պողոսյան Պ., Մխիթարյան Ս.** և ուրիշներ, Հայոց լեզվի հանգաբառարան, Եր., Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1976, էջ 300:

42 Տես **Գյուրջիյան Գ.**, Անուն խոսքի մասերի թվի կարգը արդի հայերենում. քերականական բառարան-տեղեկատու, Եր., «Լիմուշ», 2005, էջ 108: **Պարսկահայ**-ի կողքին նշվում է հոգնակիի մասնիկը՝ **-եր**:

43 Տես **Ղազարյան Բ.Կ.**, Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարան, Եր., Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1982, էջ 287:

**նորջուղահայ, սպահանահայ, գավառանուններից՝ փերիահայ, սալմաստահայ և ուրմիահայ** բառերը:

«Պարսկաստանի հայ» նշանակող բառերը գործածվում են արևելահայերեն և արևմտահայերեն գիտական և գեղարվեստական գրականության մեջ, մամուլում, **պարսկահայ**-ը՝ նաև առօրյա խոսքում: Հաճախական են **պարսկահայ** և **իրանահայ** բառերը: Վերջինս բնորոշ է հատկապես պաշտոնական խոսքին:

Բառարանագրական նկատելի պատմություն ունի **պարսկահայ**-ը: Հայ բառարանագրության մեջ **իրանահայ**-ը գլխաբառ դարձնելու ավանդույթ տակավին չի ձևավորվել, սակայն դա անհրաժեշտություն է, երբ պետության անունը պաշտոնապես Իրանի Իսլամական Հանրապետություն, Իրան է:

«Պարսկաստանի / Իրանի հայ» նշանակող հիմնական (միջուկային) **պարսկահայ** և **իրանահայ** բառերից բացի մյուսները հայերենի բացառական և ուղղագրական բառարաններում գրանցվելու ենթակա չեն թերևս, նրանք կարող են ընդգրկվել հայերենի էլեկտրոնային բառաշտեմարաններում:

**Դավիթ Ս. Գյուրջինյան** – լեզվաբան, 60 գիտական հոդվածների հեղինակ: Գիտական հետաքրքրություններն են հայոց լեզվի բառակազմությունը և բառակազմական իմաստաբանությունը, բառապաշարը, բառարանագրությունը և բառարանագիտությունը, խոսքարվեստը, արդի հայերենի ուսուցման հարցերը:

## Summary

### WORDS WITH THE MEANING OF “ARMENIAN LIVING IN PERSIA”

#### Semantic-structural and lexicographical research

Davit S. Gyurjinyan

**Key words** – the semantic group “foreign Armenian / Diasporan Armenian”, the word-formation model “country name+ հայ “Armenian”, **պարսկահայ** “Armenian living in Persia”, **իրանահայ** “Armenian, living in Iran”, Armenian lexicography.

The words that were created as a result of historical events, generating the concept of “Armenian living in Persia (in Iran)”, are being studied in this article. These are lexical units of Modern Armenian language, formed according to the following models: “country name+ հայ “Armenian” (**պարսկահայ** “Armenian, living in Persia”, **իրանահայ** “Armenian, living in Iran”), “name of a city populated by Armenians+հայ” (**թեհրանահայ** “Armenian living in Tehran”, **թավրիզահայ** “Armenian living in Tabriz”), “name of a province populated by Armenians+հայ” (**փերիահայ** “Armenian living in Peria Province”,

**սալմաստահայ** “Armenian living in Salmas”).

The historical foundations of word formation, the structural and semantic features of these words, their morphological values, the spheres and frequency of usage, the lexical semantic links to the analogous words are revealed.

Special attention is paid to the lexicographical processing of the units of the studied group of words in monolingual and translation dictionaries of the Armenian language.

Резюме

## **СЛОВА, ОБОЗНАЧАЮЩИЕ «АРМЯНИН, ЖИВУЩИЙ В ПЕРСИИ»**

Семантико-структурное и лексикографическое исследование

Давид С. Гюрджинян

**Ключевые слова** – семантическая группа «зарубежный армянин», словообразовательная модель «название страны+հայ «армянин», **սպարսկահայ** «армянин Персии», **իրահայ** «армянин Ирана», армянская лексикография.

Исследованы слова, созданные в армянском языке в результате исторических событий, породивших понятие «армянин, живущий в Персии (в Иране)». Это лексические единицы новоармянского языка, образованные по следующим моделям: «название страны+հայ «армянин» (**սպարսկահայ** «армянин, живущий в Персии», **իրահայ** «армянин, живущий в Иране»), «название армянонаселенного города+հայ» (**թեհրանահայ** «тегеранский армянин», **թավրիզահայ** «тебризский армянин»), «название армянонаселенной провинции+հայ» (**փերիահայ** «армянин Перии», **սալմաստահայ** «армянин Салмаста»).

Выявлены исторические основы словообразования, структурные и семантические особенности данных слов, их морфологические значимости, сферы и частота употребления, лексико-семантические связи с аналогичными словами.

Особое внимание уделено лексикографической обработке единиц изучаемой группы слов в одноязычных и переводных словарях армянского языка.

## REFERENCES

1. **Abrahamyan A. G.**, Hamarot urvagits hay gaght'avayreri patmut'yan, Ye., “Haypethrat”, 1964. **(In Armenian)**
2. **Aghayan E. B.**, Ardi hayereni batsatrakan bararan, Ye., “Hayastan”, 1976. **(In Armenian)**
3. **Acharyan H.**, Hay gaghtakanut'yan patmut'yun, Ye., “Zangak-97”, 2002. **(In Armenian)**

4. **Acharyan H.**, Hayots andznanneri bararan, vol. 4, Ye., “Petakan hamalsarani hratarakchut’yun”, 1948. **(In Armenian)**
5. **Alpoyajian A.**, Patmut’yun hay gaght’akanut’yan: Hayeru tsrume ashkharhi zanazan masere, vol. 3, Cairo, 1961. **(In Armenian)**
6. **Baghramyan R. H., Khalilov I. H.**, Hay-adrbejaneren bararan, “Luys”, Ye., 1978. **(In Armenian)**
7. **Baratyan N. R.**, Hayeren-angleren bararan, Ye., “Macmillan-Armenia”, 2002. **(In Armenian)**
8. **Barseghyan H. Kh.**, Hayeren ughghagrakan-ughghakhosakan, terminabanakan bararan, Ye., “Luys”, 1973. **(In Armenian)**
9. **Chamchians M.**, Patmut’yun Hayots, vol. 2, Venice, 1785. **(In Armenian)**
10. **Daghbashian Y.**, Liakatar bararan hayerenits ruseren, Tiflis, 1911. **(In Armenian)**
11. **Davtian T.**, Hayeren-parskeren bararan, Ye., “Ankyunaqar”, 2011. **(In Armenian)**
12. **Ghazaryan B. K.**, Zhamanakakits hayots lezvi hatsakhakanut’yan bararan, Ye., “Haykakan SSH gitut’yunneri academiayi hratarakchut’yun” 1982. **(In Armenian)**
13. **Gharibyan A. S., Shekyan G. S.**, Dprotsakan ughghagrakan bararan, Ye., “Luys”, 1981. **(In Armenian)**
14. **Gyumjian M.K.**, Endartsak bararan hayerene angleren, Cairo, 1950. **(In Armenian)**
15. **Gyumjian M.K.**, Grpani nor bararan, angleren-hayeren, hayeren-angleren, Beirut, “Shirak”, 2002. **(In Armenian)**
16. **Gyurjinyan D.**, Anun khosqi maseri t’vi karge ardi hayerenum: qerakanakan bararan-teghekatu, Ye., “Limush”, 2005. **(In Armenian)**
17. **Gyurjinyan D.**, “Arterkri hay” imastayin khmbi bareri bararanagrakan verlutsut’yune // “Ejmiatsin”, 2017, 10. **(In Armenian)**
18. **Gyurjinyan D.**, “Arterkri hay” imastayin khmbi bareri ner kayatsume hayeren t’argmanakan bararannerum // “Banber Yerevani hamalsarani: Hayagitut’yun”, 2017, 2. **(In Armenian)**
19. **Gyurjinyan D.**, Nor Jughayi Surb Amenap’rkich vanqi dprotse // Hayagitutyun dprotsam, 2015, t. 1. **(In Armenian)**
20. **Gyurjinyan D.**, Rusahay bari bararanagrakan qnnut’yuny // Gitakan hodvatsneri zhoghovatsu (nvirvum e Hr. Acharyani tsndyan 140-amyakin), Ye., “Asoghik”, 2016. **(In Armenian)**
21. Hay gaght’ashkharhi patmut’yun (mijnadarits minchev 1920t.), vol. 2, Ye., “HH GAA Patmut’yan institute”, 2003. **(In Armenian)**
22. Hay-ruseren bararan, Ye., “Haykakan SSH GA hratarakchut’yun”, 1984. **(In Armenian)**
23. “Hay spyurq” hanragitaran, Ye., “Haykakan hanragitaran: hratarakchut’yun”, 2003. **(In Armenian)**
24. Hayots lezui nor bararan, vol. 2, Art. Ter Khachaturian, Beirut, “Tonikyan ev vordiq”, 1992. **(In Armenian)**

25. **Kranian Andranik vrd.**, Gortsanakan bararan hayeren lezvi, Beyrut, “Shirak”, 1970. **(In Armenian)**
26. **Lusnian G., Basmajian K. Y.**, Ardzeren bararan hayeren ashkharhik lezue franseren, Constantinople, 1915. **(In Armenian)**
27. **Malkhasyants St.**, *Hayeren batsatrankan bararan*, vol. 1–4. Ye., “Haykakan SSR petakan hratarakchut’yun”, 1944–1945. **(In Armenian)**
28. **Nazaryan R., Gyodakyan A.**, *Hayeren ughghagrakan dprotsakan bararam*, Ye., “Zangak-97”, 2004. **(In Armenian)**
29. **Navoyan R. B.**, *Aknarkner 19-rd dari 50–80–akan tt. Ashkharhabaryan norakazmut’yunneri usumnasirut’yan bararan*, Ye., “Limush”, 2011. **(In Armenian)**
30. **Papoyan Art. H.**, *Paruyr Sevaki ashkhatut’yunneri ev targmanut’yunneri bararan*, Ye., “Yerevani hamalsarani hratarakchut’yun”, 1986. **(In Armenian)**
31. **Pavstos Buzand**, *Patmut’yun Hayots*, Ye., “Yerevani hamalsarani hratarakchut’yun”, 1987. **(In Armenian)**
32. **Petoyan V., Avdal A. and others**, *Bararan hayerenits krderen lezvi*, Ye., “Pethrat”, 1933. **(In Armenian)**
33. **Poghosyan P., Mkhitaryan S. and others**, *Hayots lezvi hangabaran*, Ye., “Haykakan SSH gitut’yunneri akademiayi hratarakchut’yun”, 1976. **(In Armenian)**
34. **Qerovbian G.**, *Hayeren bargirq ashkharhabar lezui*, Istanbul, “Aras”, 2011. **(In Armenian)**
35. **Raffi**, *Yerker*, vol. 1, Ye., “Haypethrat”, 1962. **(In Armenian)**
36. **Siabandov S., Chachan A.**, *Hay-krderen bararan*, Ye., “Hayastani petakan hratarakchut’yun”, 1957. **(In Armenian)**
37. **Suqiasyan A. M.**, *Hayots lezvi homanishneri bararan*, Ye., “Haykakan SSH gitut’yunneri akademiayi hratarakchut’yun”, 1967. **(In Armenian)**
38. **Suqiasyan A. M.**, *Hayots lezvi homanishneri batsatrankan bararan*, Ye., “Yerevani hamalsarani hratarakchut’yun”, 2009. **(In Armenian)**
39. **Tekeian Y.**, *Bararan hayerene spaneren*, Buenos Aires, “Akian”, 1984. **(In Armenian)**
40. **Ter Khachaturian A., Gangruni H., Tonikian P. K.**, *Hayots lezui nor bararan*, Beirut, “Tonikyan ev vordiq”, 1967. **(In Armenian)**
41. **Tsizmetsian Petros vrd.**, *Hayeren ashkharhabar lezui liakatar bararan*, vol. 1–2, Aleppo, 1954–1957. **(In Armenian)**
42. **Zhamanakakits hayots lezvi batsatrankan bararan**, vol. 4, Ye., 1980, “Haykakan SSH gitut’yunneri akademiayi hratarakchut’yun”. **(In Armenian)**